

ղինեան եկեղեցիներուն պարզութիւնն ու միաձեռութիւնը փոխանակել չքեղութիւններով և նոր ոճի յանդուգն համեմատութիւններով: Բիւզանդիոնի մէջ այլ և այլ առիթներով փրցուած ու վերաշինուած եկեղեցիներուն մէջ կայսեր հրամանով կը հաստատուէին նոր ոճեր՝ որ երբեք նմանութիւն չունէին փրցուած կամ կործանուած հին եկեղեցիներուն: Բեթղէնէմի եկեղեցին ալ, 529 ին Սամարացոց ապստամբութեան առթիւ, փլուած էր: Այս մասին ո՛րքէն բացառապէս տեղեկութիւն չունինք: Միայն զայս կարելի է հետեցնել այն յիշատակութենէն, զոր Եւտիքիոս իր պատմութեան հետ կը խառնէ Սամարացիներուն կողմէն հրդեհուած սրբավայրերու վերաշինութիւնը և Բեթղէնէմի պարիսպներուն նորոգութիւնը, զոր Պրոկոպիոս ցոյց կու տայ Յուստինիանոսի գործերուն մէջ: Նոյն իսկ անկարելի է աւելի հաւաստեալ հաստատել թէ Ս. Ծննդեան եկեղեցին, որ այն ատեն երկու հարիւր տարուան հնութիւն ունէր, այն աստիճան փլկւած ըլլալ որ կարևոր նորոգութիւններու պէտք ունենայ, թէպէտեալ կարծիքը ըստ ինքեան հաւանական, ընդունելի ըլլալ օրինակովը Ս. Առաքելոց եկեղեցոյն, որ Բեթղէնէմի Կոստանդինեան եկեղեցիին ժամանակակից էր, և սակայն Զ. դարուն աւերակ դարձած էր լոկ իր հնութեամբը, ըստ Պրոկոպիոսի:

Ստոյգ է որ Զ. դարուն, խորհրդանշանական և ծիսական պատճառով մը նախընթաց դարերուն հիմնարկուած քրիստոնէական եկեղեցիները փոփոխութիւններու ենթարկուեցան: Նախնի դարերու մէջ քիչ գործածուած խաչաձև յատակագիծը կը ձկտէր նոր ծաւալ մը ստանալ, քրիստոնէական գաղափարին յարմարագոյն: Բաց աստի, նոյն ձևը կը համապատասխանէր ծիսական նորութեան մը, որ էր *Prothèse* (Prothèse) ունենալ և Մեծ Մուտք (Grande Entrée) կատարել (*): Ս. Հաղորդութեան ընծաներուն պատրաստութիւնը այս ժամանակէն վերջ սեղանէն դուրս

(*) Հոգելոյս Տ. Եղիշէ Դուրեան Սրբազան գիտել տուաւ մեզ թէ մեր Խորհրդատետրին մէջ Ս. Պատարագի թափօրէն յետոյ, ճաշու շարականին ժամանակ, ծածուկ կարդացուած «Տէր Աստուած մեր» աղօթքին մէջ «Արա՛յ այժմ ընդ մուտս մեր մտանել...» նախադասութեան մուտք բառով՝ կը հասկցուի, ըստ Ոսկեբերանի պատարագամատոյցին, պատարագի խնկարկութեան թափօրը կամ *Phafre Vnsefr*, որու մասն է Աւետարանի վերաբերումը. իսկ Մեծ Մուտքը կը կատարուի սկիհին վերաբերումով: